ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"24" մայիսի 2024 թվական N 09-Ն

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 12-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետի և 10-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2023 թվականի նոյեմբերի 24-ի «2024 թվականի փոստային վճարման պետական նշանների թեմաները սահմանելու և փոստային վճարման պետական նշանների անվանագները, տպաքանակն ու գործողության մեջ դնելու ժամկետները հաստատելու մասին» N 12-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 4-րդ կետի 1-ին ենթակետի՝ «Քանակը» սյունակի «1 նամականիշ» բառերը փոխարինել «1 նամականիշով գեղաթերթիկ» բառերով, «Գործողության մեջ դնելու ժամկետը» սյունակի «I եռամսյակ» բառերը փոխարինել «II եռամսյակ» բառերով և «Անվանագինը (դրամ)» սյունակի «400» թիվը փոխարինել «500» թվով:

2. Հաստատել փոստային վճարման պետական նշանների նմուշները՝

1) Միջազգային. Եվրոպա 2024. «Ստորջրյա ֆաունա և ֆլորա» թեմային նվիրված «ՍՏՈՐՋՐՅԱ ՖԱՈՒՆԱ ԵՎ ՖԼՈՐԱ. ANDERWATER FAUNA & FLORA» 1 նամականիշով գեղաթերթիկի, համաձայն N 1 հավելվածի:

2) Մեծանուն հայեր. Երվանդ Քոչարի ծննդյան 125-ամյակ թեմային նվիրված «ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ. ERVAND KOCHAR. 1899-1979. 125TH. ԱՄՅԱԿ. ANNIVERSARY. ՀԱՅ

ՆԿԱՐԻՉ, ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ. ARMENIAN PAINTER, SCULPTOR» 1 նամականիշով գեղաթերթիկի, համաձայն N 2 հավելվածի:

3. Գործողության մեջ դնել՝

1) Միջազգային. Եվրոպա 2024. «Ստորջրյա ֆաունա և ֆլորա» թեմային նվիրված «ՍՏՈՐՋՐՅԱ ՖԱՈՒՆԱ ԵՎ ՖԼՈՐԱ. ANDERWATER FAUNA & FLORA» 1 նամականիշով գեղաթերթիկը, անվանագինը՝ 500 դրամ, տպաքանակը՝ 15 000 հատ:

2) Մեծանուն հայեր. Երվանդ Քոչարի ծննդյան 125-ամյակ թեմային նվիրված «ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ. ERVAND KOCHAR. 1899-1979. 125TH. ԱՄՅԱԿ. ANNIVERSARY. ՀԱՅ ՆԿԱՐԻՉ, ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ. ARMENIAN PAINTER, SCULPTOR» 1 նամականիշով գեղաթերթիկը, անվանագինը՝ 380 դրամ, տպաքանակը՝ 10 000 հատ:

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 1
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2024թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 09-Ն հրամանի



Հավելված 2
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2024թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 09 - Ն հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ВЫСОКОТЕХНОЛОГИЧЕСКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
MINISTRY OF HIGH-TECH INDUSTRY OF THE REPUBLIC OF ARMENIA
0010 ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 1 • 02565518 •